

ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/9

24 հունիսի 2014 թ.

Քննարկվեց «Լինինգ բոեյք» ՍՊԸ 26.05.2014 թ-ի թիվ 12 գրությամբ բերված պահանջը 01.01.2014 թ-ից ավելացված արժեքի հարկ վճարող համարելու վերաբերյալ:

«Լինինգ Բոեյք» գրությունում բերված փաստարկները.

«Լինինգ բոեյք» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) գործունեություն իրականացնելու իսկ օրվանից՝ 01.06.2011 թ-ից, հարկային դաշտում հանդես է եկել որպես ԱԱՀ վճարող և մինչև օրս աշխատել է ԱԱՀ-ով:

2014 թ-ի հունվարի 8-ին էլեկտրոնային եղանակով (կից ներկայացրված է հայտարարության պատճենը) ուղարկվել է թիվ 71 ձևը որպես ԱԱՀ վճարող համարվելու համար, և համոզվելով, որ ինչպես նախկին տարիներին, այնպես էլ այս տարի ընկերությունը ԱԱՀ վճարող է համարվում, էլեկտրոնային եղանակով դուրս է գրել հարկային հաշիվներ, վճարել է ԱԱՀ-ի կանխավճարներ: Սակայն տարածքային հարկային տեսչությունից մարտի 25-ին տեղեկացվել է, որ թիվ 71 ձևի փոխարեն պետք է ներկայացվեր թիվ 84 ձևը:

Թիվ 84 ձևը լրացնելու ժամանակ, թյուրիմացաբար 01.01.2014 թ-ի փոխարեն լրացվել է 31.12.2014 թ-ի ամսաթիվը: Մինչև թիվ 71 ձևը ուղարկելը, էլեկտրոնային եղանակով ընկերությունը չէր կարողանում հարկային հաշիվ դուրս գրել: Թիվ 71 ձևը ուղարկելուց հետո, ծրագիրը թույլատրել է և առանց որևէ խոչընդոտի դուրս են գրվել հարկային հաշիվներ, համոզվելով, որ ընկերությունը հանդիսանում է ԱԱՀ վճարող:

«Լինինգ բոեյք» ՍՊԸ-ն գործունեություն է իրականացնում ք.Քաջարանում: Ընկերությունը ունի մեծ ծավալի պատվերներ և նախատեսում է տարվա ընթացքում շրջանառությունը հասցնել մինչև 160 մլն դրամի:

Քանի որ թիվ 84 ձևի համար ընկերությունը չի կարողանում ճշտված հայտարարություն ներկայացնել, ուստի խնդրում է թույլատրել 01.01.2014 թ-ից ընկերությունը համարվի ԱԱՀ վճարող:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ «Լինինգ բոեյք» ՍՊԸ-ն, ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով, 2014 թ-ի մարտ ամսին էլեկտրոնային եղանակով ներկայացրել է ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը: Սակայն, հայտարարությունում թյուրիմացաբար ԱԱՀ վճարող համարվելու ժամկետի սկիզբը 01.01.2014 թ-ի փոխարեն նշվել է 31.12.2014 թ-ը:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում ԱԱՀ վճարող համարվելու ժամկետը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, ըստ էության, կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Լինինգ բոեյք» ՍՊԸ գրությամբ բերված պահանջը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

«Լինինգ բոեյք» ՍՊԸ 26.05.2014 թ-ի թիվ 12 գրությամբ բերված պահանջը 01.01.2014 թ-ից ավելացված արժեքի հարկ վճարող համարելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ